ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔՆԵՐ

ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

Հրազենային զենքի կիրառմամբ բռնությունը կանխարգելելի հարնային առողջապահական ճգնաժամ է, որը մոլեգնում է մեր վարչաշրջանում:

Նահանգապետ Գեյվին Նյուսոմի ղեկավարության ներքո՝ Կալիֆոռնիան իրականացրել է երկրի զենքին վերաբերող անվտանգության խստագույն օրենքները: Սա ներառում է հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքները, որոնք ժամանակավորապես կասեցնում են ճգնաժամում հայտնված անձին հրազեն և զենք տիրապետելուց, քանի դեռ տվյալ արգելքն ուժի մեջ է:

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքը տեղական դատարանի կողմից կիրառվող քաղաքացիական գործողություն է: Արգելքը հնարավորություն է տալիս ճգնաժամում հայտնված անձին անվտանգ օգտվել աջակցությունից և խնամքից, և հավանականորեն կասեցնել հրազենի կիրառմամբ բռնությունը կամ հրազենային ինքնասպանությունը: Ըստ օրենքի այն չի համարվում պատիժ:

Արգելքի համար դիմողների կարողությունները հզորացնելով, ինչպես նաև կրթության և իրազեկվածության բարձրացման միջոցով՝ Կալիֆոռնիայի բնակիչները կարող են նվազեցնել հրազենի կիրառմամբ բռնության և հրազենային ինքնասպանության դեպքերը:

ԵԹԵ ԴՈՒՔ ԿԱՄ ՁԵՐ ՍԻՐԵԼԻՆ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ԽԻՍՏ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ և ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ, ԱՊԱ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 911:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔՆԵՐ

ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

ՀՐԱԶԵՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՆ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է

- 2021 թվականին Կալիֆոռնիան դասակարգվում էր հրազենի անվտանգության հարցում առաջին տեղը՝ ըստ **Giffords Law Center-ի**: Նույն տարում նահանգում գրանցվեց հրազենային մահերի մակարդակի 37% նվազում, որը տարբերվում է երկրի միջին ցուցանիշից:
- Կալիֆոռնիացիները 25%-ով **ավելի քիչ հավանական է, որ կմահանան զանգվածային կրակոցներից**՝ համեմատած այլ նահանգների մարդկանց հետ:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿՅԱՆՔՆԵՐ ՓՐԿԵԼ

- Կալիֆոռնիան **հրահանգել է** հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման 3,007 դատական ժամանակավոր արգելք 2016-ից 2020 թվականների միջակայքում:
- Ուժի մեջ մտնելուց ի վեր առաջին երեք տարիների ընթացքում **արգելքներն օգտագործվել են՝ օգնելու կանխել 58 սպառնացող զանգվածային կրակոցներ** նահանգում՝ համաձայն UC Davis-ի ուսումնասիրողների:

ԱՆՀԱՏԻՆ ՄՏԵՐԻՄ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆԸ ՏԵՍՆԵԼ

Նահանգապետ Նյուսոմը ստորագրել է օրինագիծ, որն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից՝ նպատակ ունենալով ընդլայնել այն մարդկանց ցուցակը, ովքեր կարող են դիմել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքի համար:

Այս «իրավասու խնդրարկուները» այժմ ներառում են՝

- **Ընտանիքի անդամ և սիրելի անձնավորություն՝** ըստ արյունակցական կապի, ամուսնության կամ որդեգրման:
- **Ընտանիքի և նույն սենյակում ապրող ներկայիս կամ նախկինում ապրող անձ** կամ ով հանդիսացել է այդպիսին վերջին վեց ամսվա ընթացքում:
- **Գործընկեր**, ով կանոնավոր փոխազդեցություն է ունեցել ճգնաժամում հայտված անձի հետ առնվազն մեկ տարի ժամկետով՝ ունենալով գործատուի հավանությունը:
- **Միջին դպրոցի, ավագ դպրոցի, քոլեջի կամ համալսարանի ուսուցիչ կամ աշխատող,** որտեղ ճգնաժամում հայտնված անձը հաճախել է վերջին վեց ամիսներին՝ դպրոցի վարիչի կամ ղեկավարի թույլտվությամբ:
- **Իրավապահ մարմիններ**, այդ թվում Կալիֆոռնիայի խաղաղապահները:
- **Անհատ**, ով ընդհանուր երեխա ունի կամ ժամադրվում է ճգնաժամում հայտնված անձի հետ: